ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 130

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի դ) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հաստատել աղետների ռիսկի կառավարման պլանը համաձայն հավելվածի.
2. Աղետների ռիսկի կառավարման խորհրդին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը իրականացնել պլանի վերանայում:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
4. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019 թ. 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 131

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Արթուր Հարությունյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Կոտայքի մարզի Սոլակ համայնքում Արթուր Հարությունի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 07-060-0506-0006 ծածկագրի 1,0 հա մակերեսով հողամասի 0.20 հա-ի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսականից արդյունաբերական ընդերքօգտագործման, համաձայն կից ներկայացվող հատակագծի:

2. Արթուր Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 07-060-0506-0006 ծածկագրով 1.0 հա հողամասից անջատված 0.20 հա հողամասում տալ գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսության կառուցման շինարարության թույլտվություն:

3. Արթուր Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 07-060-0506-0006 ծածկագրի 1.0 հա հողամասից անջատված 0.20 հա հողամասին տրամադրել հետևյալ հասցե՝ Կոտայքի մարզի Սոլակ համայնք 15-րդ թաղամաս 2:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ՄԱԶԱՏՐՅԱՆ

2019 թ. 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 132

## ԹԱՐԻՍ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, նկատի ունենալով Թարիս Սիմոնյանին հատկացված հողամասից քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակներով օգտագործելու համար, չի խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հանրային սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Թարիս Սիմոնյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Թարիս Սիմոնյանի սեփականության իրավունքը Սոլակ համայնքի 5-րդ փողոց 9-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 07-060-0053-0007/, ըստ կադաստրային քարտեզագրման փաստացի օգտագործվող 0,17602 հեկտար հողամասի նկատմամբ համաձայն <<Պիրամիդա>> ՍՊԸ -ի հատակագծի, որը նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանումում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019 թ. 17 հոկտեմբերի
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 133

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 54 որոշումը և բնակիչների դիմումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սոլակ համայնքի բյուջեի «Բնակչության օգնություն տալու մասին» 4729 հոդվածից հատկացնել 50 000 /հիսուն հազար/ դրամ գումար յուրաքանչյուրին հետևյալ չափով.

1. Միշա Մարգարյան - 20 000 ՀՀ դրամ
2. Լուսինե Խաչատրյան - 30 000 ՀՀ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019 թ. 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 134

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N1582-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասը գնահատող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1:

2. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2:

3. Սույն որոշմամբ ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավվել մարզային հանձնաժողովի ներկայացուցիչներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019 թ. 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
գ.Սոլակ

Հավելված 1
Սոլակ համայնքի ղեկավարի 2019
թվականի նոյեմբերի 22-ի N 134 որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովի

| Հ/հ | Համայնք | Անուն ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը | Հանձնաժողովում պաշտոնը | հեռախոս | Մակագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սոլակ | Էդգար Խաչատրյան | համայնքի ղեկավար | հանձնաժողովի նախագահ | 093168500 | |
| 2 | | Սերոբ Կարապետյան | Համայնքի ղեկավարի տեղակալ | հանձնաժողովի նախագահի տեղակալ | 094999422 | |
| 3 | | Քնարիկ Սուքիասյան | աշխատակազմի քարտուղար | հանձնաժողովի քարտուղար | 094611991 | |
| 4 | | Սամվել Ստեփանյան | Պերճ Բաղդյանի անվան մշակույթի տան ՀՈԱԿ-ի տնօրեն | հանձնաժողովի անդամ | 098022210 | |
| 5 | | Գոհարիկ Հարությունյան | աշխատակազմի առաջատար մասնագետ | հանձնաժողովի անդամ | 077319252 | |

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 21-ի N 134 որոշման

# ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԸ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

1.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասի գնահատման համար.

1) կազմել վնասված գույքի ցանկը՝ նշել տեսակը, գտնվելու վայրը և համառոտ բնութագիրը.

2) ուսումնասիրել և գնահատել վնասված գույքի վիճակը.

3) գնահատել գույքին պատճառված վնասի չափը.

2.Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս դեպքի մասին անհապաղ տեղեկատվություն ներկայացնել մարզային փրկարական վարչություն, որպեսզի մարզային փրկարական վարչության կողմից դեպքի մասին տեղեկատվություն ներկայացվի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

3. Տեղեկատվությանը ներառել

1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3) Դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի /անձանց/ կազմը /անձնական տվյալները/

4) ներառել դեպքի բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

4. Անհրաժեշտության դեպքում համայնքային հանձնաժողովի աշխատանքներին ներգրավվել մարզային հանձնաժողովի ներկայացուցիչներ

5. Համայնքային հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել մարզային հանձնաժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 135

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N384-Ն որոշման 1-ին կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ համայնքի բնակչության պաշտպանությունը կազմակերպելու, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման համար ստեղծել քաղաքացիական պաշտպանության համայնքային հետևյալ ծառայությունները.

1) Կապի և ազդարարման ծառայություն՝ <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության Սոլակի տարածքային կենտրոնի բազայի հիման վրա: Ծառայության պետ է պաշտոնե հանդիսանում է <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության Սոլակի փոստային բաժանմունքի օպերատոր:

2) Բժշկական ծառայություն՝ համայնքի <<Սոլակի ԱԱՊԿ>>-ի բազայի հիման վրա:Ծառայության պետ է պաշտոնե հանդիսանում է <<Սոլակի ԱԱՊԿ>>-ի տնօրենը:

3) Ինժեներական ծառայություն՝ համայնքի տարածքում գործող շինարարական և շինարարական վերանորոգման բազայի հիման վրա:Ծառայության պետ է պաշտոնե հանդիսանում է համայնքի ղեկավարի տեղակալը:

4) Տրանսպորտային ծառայություն՝ համայնքի բնակիչների սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների բազայի հիման վրա: Ծառայության պետ է պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը:

5) Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն՝ համայնքի տարածքում տեղակայված առևտրի և սննդի կազմակերպությունների բազայի հիման վրա: Ծառայության պետ է պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար:

6) Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն՝ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Գեղամա>> մասնաճյուղի բազայի հիման վրա: Ծառայության պետ է պաշտոնե հանդիսանում է <<Գեղամա>> մասնաճյուղի Սոլակի հսկիչը:

7) Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն՝ համայնքի տարածքում գործող գյուղացիական, ֆերմերային տնտեսությունների անասնաբուժության բազայի հիման վրա: Ծառայության պետ է պաշտոնե հանդիսանում է համայնքի անասնաբույժը:

8) Հասարակական կարգի պահպանման ծառայություն՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության բազայի հիման վրա: Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Սոլակի տեղամաս սպասարկողը:

9) Կոմունալ տեխնիկական ծառայություն՝ համայնքի տարածքը սպասարկող ջրամատակարարման, գազի ձեռնարկությունների բազայի հիման վրա: Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետը:

10) Բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն: Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը:

2. Սույն որոշման հսկողությունը դնել Սոլակ համայնքի ղեկավար՝ Է. Խաչատրյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019 թ. 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 136

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի N919-Ն որոշման 7-րդ կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- 1. Հաստատել՝

1) Ուժեղ երկրաշարժի դեպքում Սոլակ համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման գործողությունների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Ուժեղ երկրաշարժերի դեպքում Սոլակ համայնքի բնակչության պաշտպանության միջոցների կառավարման սխեման՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Ուժեղ երկրաշարժերի դեպքում բժշկական ապահովման ուժերի հաշվարկ՝ համաձայն N 3 հավելվածի:

4) 10 բալ ուժեղ երկրաշարժերի դեպքում Սոլակ համայնքին հասցված վնասների, փրկարարական և վթարավերականգնողական ուժերի ու միջոցների հաշվարկ՝ համաձայն N 4 հավելվածի:

5) Ուժեղ երկրաշարժերի դեպքում Սոլակ համայնքի տարահանված բնակչության վրանային ավանի համար առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովման հաշվարկ՝ համաձայն N 5 հավելվածի:

6) Ուժեղ երկրաշարժերի դեպքում Սոլակ համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկ՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019 թ. 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ

գ.Սոլակ

Հավելված N 1
Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի
2019 թվականի նոյեմբերի 21-ի N 136 որոշման

# ՊԼԱՆ

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ՊԼԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի գործողությունների պլանը (այսուհետ՝ պլան) սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ համայնքապետարանի, կազմակերպությունների և փրկարար ուժերի խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը:

### ՊԼԱՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. Պլանում ներգրավվում են՝
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակի համայնքապետարանը.
2) Սոլակ համայնքի տարահանման հանձնաժողովը.

### Պլանում ներգրավված մարմինների գործառույթները

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ պլանում ներգրավված մարմինների գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակի համայնքապետարանի գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. միջոցառումների իրականացումը՝ համայնքային ենթակայության օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով,

գ. համայնքի բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, նյութական և մշակութային արժեքների, գյուղատնտեսական կենդանիների ու ապրանքների տարահանման, բնակչության՝ ժամանակավոր կացարաններով և առաջին անհրաժեշտության միջոցներով ապահովումը,

դ. համայնքի բնակչության ազդարարումը,

ե. համայնքի ուժերի՝ փրկարարական աշխատանքներին մասնակցության ապահովումը,

զ. մահացածների հուղարկավորության իրականացումը,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը

2) Սոլակ համայնքի տարահանման հանձնաժողովը. տարահանման հանձնաժողովի գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպումը,

գ. տարահանված բնակչության ընդունման հավաքակետերի և տեղաբաշխման վայրերի ծավալման նախապատրաստման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը,

դ. տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

ե. տարահանված բնակչությանը տեղաբաշխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների համալրման աշխատանքների կազմակերպումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

## ՊԼԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Պլանի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր՝

1) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,

2) «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180 - Ն որոշումը,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշումը,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» N 1494-Ն որոշումը,

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշումը (Հայաստանի Հանրապետության կառավարության 28.10.2010թ. N 1471-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն),

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշումը:

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի 10 հունիսի <<Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին>> N 919 - Ն որոշումը:

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Սոլակ համայնքը գտնվում է Հրազդան գետի ձախ ափին մարզկենտրոնից 14 կմ հարավ-արևմուտք:Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1650մ բարձրության վրա, ընդհանուր մակերեսը՝ 4274,48հա:

Համայնքի կլիմայական պայմանները՝ բարեխառն, մեղմ ձմեռով, համեմատաբար չոր եղանակով:

Համայնքի բնակչության թիվը կազմում է 2473 մարդ, որից 1223 արական սեռի, իսկ 1250՝ իգական: Ըստ տարիքի՝ մինչև 0-3 տարեկան 136, 3-6 տարեկան՝ 81, 6-18 տարեկան՝ 320, 18-65 տարեկան 1665, 65-ից բարձր՝ 271:

Բնակելի տների ընդհանուր քանակը՝ 537, որից 536-ը՝ առանձնատներ, 1-ը՝ բազմաբնակարան շենքեր :

Համայնքի տարածքում է գտնվում համայնքապետարանի վարչական շենքը, 1 մշակույթի տուն, մանկապարտեզը, դպրոցը և Առողջության առաջնային պահպանման կենտրոնը, հայփոստի բաժանմունքը:

Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է օրվա կարգավորիչ 2 ջրամբարներից:

## ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

6. Հնարավոր իրադրության բնութագիրը՝

1) համաձայն լիազոր մարմնի տվյալների՝ երկրաշարժի առավել հավանական էպիկենտրոններ են համարվում՝

ա. Գառնի՝ $\lambda$ =44°80′, $\varphi$ =40°10′, M=7.0, H=15 կմ (10-11 բալ),

բ. Զանգեզուր՝ $\lambda$ =46°00′, $\varphi$ =39°20′, M=6.3, H=22 կմ (8-9 բալ),

գ. Սպիտակ՝ $\lambda$ =44°23′, $\varphi$ =40°92′, M=7.1, H=15 կմ (9-10 բալ),

դ. Փարաքար՝ $\lambda$ =44°43′, $\varphi$ =40°13′, M=5.0, H=10 կմ (7 բալ).

2) հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր էպիկենտրոններից առավել մեծ վնաս կհասցվի Գառնիի երկրաշարժի դեպքում (10-11 բալ), սույն պլանում հնարավոր իրադրության գնահատականը տրված է ըստ այդ տվյալների:
Ուժեղ երկրաշարժի դեպքում Մողակ համայնքի վարչական տարածքում երկրաշարժի ուժգնությունը կարող է հասնել 9 բալի:

7. 9 բալ ուժգնության երկրաշարժի դեպքում համայնքի բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 500 մարդ, որից՝ անվերադարձ -400 մարդ, սանիտարական – 100, անօթևան բնակչության թիվը կկազմի - 1000 մարդ :

8. Համայնքում հնարավոր է բնակելի շենքերի, առանձնատների, կառույցների ու շինությունների հիմնական մասի լրիվ կամ մասնակի ավերում:

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Մողակ համայնքի տարածքում՝ բնակելի թաղամասերին կից գտնվող ազատ տարածությունում տեղծվում են 2 վրանային ճամբարներ, որտեղ տեղաբաշխվում են 2000 մարդ :

## ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

10. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացման վերաբերյալ որոշման ընդունման, ուժերի նախապատրաստման և կիրառման կարգը հետևյալն է՝

1) երկրաշարժի գոտու հետախուզական տվյալները հավաքվում և վերլուծվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության աշխատանքային խմբում՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի վարչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ.

2) վերլուծության արդյունքում որոշվում են՝

ա. երկրաշարժի հետևանքների ծավալները,

բ. փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը,

գ. ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող կազմակերպությունների (օբյեկտների) վթարի բնույթը, ծավալները, ինչպես նաև թունավոր նյութերի հնարավոր ազդեցությունը փրկարարական ուժերի գործողությունների վրա,

դ. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով այլ չտուժված համայնքների, մարզերի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավման անհրաժեշտությունը

ե. միջազգային օգնության կարգով հատկացվող ուժերի ու միջոցների օգտագործման անհրաժեշտությունը, քանակը և ներգրավման վայրը,

զ. տեղանքի բնույթը, ճանապարհների վիճակը, տարվա օրվա ժամանակն ու եղանակը և այդ գործոնների ազդեցությունն ուժերի գործողությունների վրա,

է. աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները,

ը. աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները.

3) ելնելով իրադրության գնահատման եզրակացություններից՝ մարզային ԱԻ հանձնաժողովի նախագահն ընդունում է որոշում աղետի գոտում որոնողափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ, ըստ որի աղետի գոտու համար նշվում են՝

ա. երկրաշարժի տարածքը և հետևանքները,

բ. փրկարարական աշխատանքների իրականացման համար ներգրավվող ուժերն ու միջոցները և նրանց խնդիրները,

գ. աշխատանքների կատարման անվտանգության միջոցառումները,

դ. աղետի գոտու տուժածների և բնակչության տարահանման երթուղիները,

ե. ներգրավված ուժերի համագործակցության կարգը և գործողություններն ապահովող միջոցառումները,

զ. պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը,

է. փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովման կարգը,

ը. կառավարման կազմակերպման կարգը.

4) երկրաշարժի հետևանքների վերացման մարզային հանձնաժողովի նախագահը փրկարարական և

այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կառավարման մարմինների և փրկարարական ուժերի ղեկավարներին տալիս է առաջադրանքներ՝ անձամբ կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության միջոցով:

## ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Մարզի փրկարարական, վթարավերականգնողական, հասարակական փրկարարական խմբերի և բնակչության բազայի հիման վրա կազմվում է ուժերի խմբավորում, որը նախատեսված է փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու համար: Աղետի գոտում փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերն ու միջոցները կազմված են՝

1) առաջին էշելոնից, որը նախատեսված է իրավիճակը բացահայտելու, գնահատելու, փրկարարական աշխատանքներ սկսելու և հետագայում ժամանող ուժերի ներգրավումն ապահովելու համար: Ընդգրկում են՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների 2/3-ը (մնացած ուժերը մնում են հիմնական տեղակայման վայրերում՝ ամենօրյա խնդիրների լուծման համար),

բ. այլ մարզերի ուժերը.

2) երկրորդ էշելոնից, որը նախատեսված է փրկարարական աշխատանքների ծավալը կտրուկ ընդլայնելու համար: Ընդգրկում է մարզի առաջին կանչի ուժերը և վթարավերականգնողական խմբերը.

3) երրորդ էշելոնից կամ պահուստից, որը նախատեսված է անսպասելի ծագող խնդիրների լուծման համար: Ընդգրկում է երկրորդ էշելոնում չընդգրկված մարզային և համայնքային ուժերը, հասարակական փրկարարական խմբերը և ներգրավված բնակչությունը: Փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով ուժերի և միջոցների առեղծման ժամանակ պահպանվում են դրանց կիրառման սկզբունքները՝ գլխավոր խնդրի իրականացման համար, հաշվի առնելով բնակավայրերի ավերվածության աստիճանը և նրանցում բնակչության թիվը (խտությունը): Ուժերի տեղակայման վայր ընտրելիս՝ հաշվի են առնվում հիվիենիկ - համաճարակային իրավիճակը, զբաղեցրող բամինքի ռադրությունը, ճանապարհների առկայությունը երկրաշարժից ավերված գոտիներում (հատվածներում), փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելիս՝ ուժերի և միջոցների կենտրոնացված ղեկավարությունն իրագործելու հնարավորությունները, նյութատեխնիկական ապահովումը, ուժերի և միջոցների ուղարկումն առաջին հերթին խիտ բնակեցված հատվածներ՝ փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

12. Աշխատանքային տեղամասերի ղեկավարները մինչև փրկարարական աշխատանքների սկիզբը կազմակերպում են տվյալ աշխատանքային տեղամասում գործող ուժերի համագործակցությունը՝

1) որոշում են աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը՝ ըստ կատարման ժամանակի.

2) որոշում են ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը՝ աշխատատար աշխատանքներն իրականացնելու ընթացքում.

3) համաձայնեցնում են ըստ կատարման տեղի և ժամանակի ներգրավված ուժերի գործողությունները.

4) որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև.

5) հայտ են ներկայացնում արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողով՝ լրացուցիչ ուժեր հատկացնելու համար: Փրկարարական աշխատանքների կատարման ընթացքում ճշտում և անընդհատ զբաղվում են համագործակցության հարցերով.

6) տեխնիկայի մուտքը երկրաշարժի գոտի նախատեսվում է՝

ա. առաջինը՝ թրթուրավոր տեխնիկայի մուտքը,

բ. այնուհետև՝ անիվավոր մեքենաների մուտքը.

7) դեպի աշխատանքային տեղամասեր փրկարարական ուժերի մուտքն ապահովելու համար նախատեսվում են փրկարարական ուժերի առաջշարժումը (մուտքն աղետի գոտի) ապահովող խումբ և ամնիատարական դրուժինաներ.

8) որպես առանձին միջոցառում՝ փրկարարական ուժերի մուտքի ապահովումը հսկահրդեհային ապահովումն է, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ուժերով և ներառում է հրդեհների տեղայնացումն ու մարումը, ապահովվում են վառվող, ծխապատ և գազերով լցված շինություններից մարդկանց փրկումը և տեղափոխումն անվտանգ վայրեր.

9) փրկարարական ուժերի երկրաշարժի գոտում փրկարարական աշխատանքների՝ տեղամասեր ժամանումից հետո աշխատանքների տեղամասերի ղեկավարները միջոցներ են ձեռնարկում փլուզված և այրվող շենքերից ու շինություններից մարդկանց փրկելու, առաջին օգնություն ցուցաբերելու և դաշտային կամ

տեղափոխման բուժհիմնարկներ տեղափոխելու համար.

10) տուժածներին հայտնաբերելու նպատակով՝ փրկարարական կազմավորումների ղեկավարներն աշխատանքային տեղամասեր են ուղարկում որոնման խմբեր, որոնք մանրակրկիտ զննում են փլուզված շենքերը և կառույցները: Տուժածների տեղերը հայտնաբերելու գործընթացում անհրաժեշտ է օգտագործել տեղի բնակչության կողմից ստացված տեղեկատվությունը և բնակչության ուժերն օգտագործել տուժածներին փլատակների տակից դուրս բերելու համար, քանի որ այդ ժամանակ մեծանում է ձեռքի աշխատանքների ծավալը:

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ, ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Բնակչության կենսաապահովման, տուժածներին օգնություն ցուցաբերելու, փրկարարական աշխատանքների կազմակերպման համար և այդ նպատակով պարենային, բժշկական ու նյութական պաշարների նպատակային օգտագործման կարգն է՝

1) երկրաշարժի ժամանակ լուծվում են բնակչության կենսաապահովման հիմնական խնդիրները՝ բնակչության կյանքին, առողջությանը, աշխատունակությանը և ֆիզիոլոգիական պահանջների ապահովմանն ու պահպանմանը վերաբերող: Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակներին ծառայում են նաև առկա և ստեղծվող (առաջվող) նյութական պաշարները ու այլ մարզերի, համայնքների, կազմակերպությունների ու մարդասիրական օգնության միջոցները.

2) արտակարգ իրավիճակների համար անհրաժեշտ նյութական պաշարների ու միջոցների ցանկը և ծավալները որոշում են ըստ չափաքանակների՝ տուժած բնակչության թվի հիման վրա և արտակարգ իրավիճակների դասակարգմանը համապատասխան.

3) նյութական պաշարները և միջոցները պետք է օգտագործվեն առաջնահերթ հետևյալ միջոցառումների իրականացման համար՝ վթարափրկարարական, մարդկանց կյանքի և առողջության անմիջական վտանգի վերացման աշխատանքների, տուժած բնակչության համար ժամանակավոր կացարանների ու սննդի կետերի ծավալման և դրանց գործունեության ապահովման, միանվագ նյութական օգնության ցուցաբերման և այլն.

4) տուժած բնակչության սոցիալական և կենսաապահովման, այդ թվում՝ անօթևան մնացած բնակչությանը ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպիչն ու պատասխանատուն պետական կառավարման տարածքային մարմինն է, որը համագործակցում է համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ.

5) երկրաշարժի դեպքում նյութական պաշարների և միջոցների առաջնահերթ օգտագործման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովը.

6) փրկարարական աշխատանքների և կենսաապահովման տարրերով բնակչության ապահովման ավարտից հետո կազմվում է իրականացված միջոցառումների ընթացքում օգտագործված նյութական պաշարների ու միջոցների մասին հաշվետվություն, որի հիման վրա սահմանված կարգով լրացվում են պաշարներն ու միջոցները:

## ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄԸ

14. Կատարելագործման բազային հիմքեր պետք է ծառայեն հետևյալ աղբյուրները՝

1) բնակչության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքները և ենթաօրենսդրական ակտերը.

2) երկրաշարժերի թեմայով անցկացվող շտաբային, հրամանատարաշտաբային ուսումնավարժությունների արդյունքները.

3) տեղեկատվական տվյալների բազայի լրամշակումը, նոր հայտնաբերված վտանգավոր գործընթացների, շենքերի և շինությունների (այդ թվում՝ նաև նոր կառուցվող), կենսաապահովման ցծերի վիճակի տեխնիկական պլանային գերատեսչական գնահատումը:

15. Պլանի ճշգրտման գործընթացը համակարգում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը:

Հավելված N 2
Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 21-ի N 136 որոշման

# Ս Խ Ե Մ Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ



Հավելված N 3
Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի
2019 թվականի նոյեմբերի 21-ի N 136 որոշման

# ՀԱՇՎԱՐԿ
# ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒԺԵՐԻ

| Համայնքի անվանումը | Ավտոների բժշկության կազմակերպությունների և անձնակազմերի քանակը, ըստ մասնագիտական ուղղությունների | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հասցե հեռախոս | Հրատապական.բժշկ օգնութ. բր. | հրատապ.բժշկ օգնութ. բր. | Շտապ բուժօգ. բրիգ /գծային/ | | վիրաբուժական | նեյրովիրաբուժ. | հասվածքաբան. | այրվածքաբան. | տրանսֆուզիոլ. | մանկաբարձագինեկոլոգ. | մանկական վիրաբուժ. | հոգեբուժական | վարակաբանական | ակնաբուժական | դիմածնոտային | քիթ-կոկորդ-ականջ | ռադիոլոգիական | անեսթեզիոլոգիական | վերակենդանացման | մանկաբուժական | թերապևտիկ | տոքսիկոթերապևտիկ | ճառագայթա. լաբորատ. ախտ. | հիգիեն. հակահամաճ. ծառ. | ԸՆԴԱՄԵՆԸ |
| | | | | բժշկական | բուժական | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| Սոլակի ԱԱՊԿ | Գ. Սոլակ 8-րդ փողոց 18 | 1/3 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1/3 |

Հավելված 4
Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 136 որոշման

9 ԲԱԼ ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ, ՓՐԿՍ

| Երկրաշարժի ուժգնությունը | Համայնքի անվանումը | Բնակչության թվաքանակը | Բնակչության շրջանում ընդհանուր կորուստները | որոնցից | | Որից | | | Վնասված շենքեր | որոնցից | | | | | | Խոշոր վթարներ կոմունալ-էներգետիկ ցանցում | Փլվածքներով փակված փողոցներ | Փլատակների մակերեսը (մ2) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվերադարձ | Սանիտարական | ծանր վիրավորներ | միջին ծանրության վիրավորներ | թեթև վիրավորներ | | 1-ին կարգ | 2-րդ կարգ | 3-րդ կարգ | 4-րդ կարգ | 5-րդ կարգ | խոշոր հրդեհներ | | | |
| 9 | Սոլակ | 2473 | 500 | 400 | 100 | 50 | 20 | 30 | 200 | 40 | 60 | 20 | 30 | 30 | 6 | 15 | 2 | 10300 |

ՐԱՐԱԿԱՆ և ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

| ծավալը (մ3) | Ձեռքով աշխատող փրկարարական | | Մեխանիզացված փրկարարական | | Սանիտարական | | Հրդեհա-շիջման մ/ն | ՎՎԻ | ՀԿՊԶ | Ինժենե-րական տեխնիկա | Այդ թվում | | | ինքնաթափ | կոմպրե-սորային կայաններ | էլեկտր-ա-կայաններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | խմբեր | անձն ա-կազմ | խմբեր | անձնա-կազմ | խմբեր | անձնա-կազմ | | | | | մղան | էքսկավատ | ավտոկռունկ | | | |
| 0 | 10 | 70 | 2 | 10 | 1 | 5 | 1 | 0 | 0 | 1 | 0 | 1 | 1 | 35 | 3 | 0 |

Հավելված 5
Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 21-ի N 136 որոշման

## ՀԱՇՎԱՐԿ
## ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎՐԱՆԱՅԻՆ ԱՎԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

| NN p/կ | Ապրանքների անվանումները | Չափի միավորը | քանակը | 1800 մարդու համար |
|---|---|---|---|---|
| 1 | Միանվագ օգտագործման սպասք | լրակազմ/մարդ | 5 | 900 |
| 2 | Մետաղյա խորը թաս | Հատ/մարդ | 1 | 1800 |
| 3 | Գդալ | Հատ/մարդ | 1 | 1800 |
| 4 | բաժակ | Հատ/մարդ | 1 | 1800 |
| 5 | Դույլ | հատ/5 մարդու համար | 1 | 1800 |
| 6 | Մետաղյա թեյնիկ | հատ/10 մարդու համար | 1 | 180 |
| 7 | Խմելու ջրի տարողություն (10 լիտրանոց) | հատ/4 մարդու համար | 1 | 450 |
| 8 | Խմելու ջրի տարողություն (20 լիտրանոց) | հատ/4 մարդու համար | 1 | 450 |
| 9 | Օճառ | կգ/մարդ | 0,2 | 360,0 |
| 10 | Լվացքի միջոցներ | կգ/մարդ | 0,5 | 900,0 |
| 11 | Անկողնային միջոցներ | լրակազմ/մարդ | 1 | 1800 |
| 12 | լուցկի | Տուփ/մարդ/օր | 0.5 | 900,0 |
| 13 | Ծխախոտ | Տուփ/մարդ/օր | 1 | 1800 |
| 14 | Նավթավառ | հատ/4 մարդուհամար | 1 | 450 |
| 15 | Ձեռքի լապտեր (մեխանիկական) | հատ/4 մարդուհամար | 1 | 450 |
| 16 | Մոմ | հատ/4 մարդու համար /օր | 1 | 1800 |
| 18 | Վերմակ՝ բրդյա | Հատ/մարդ | 1 | 1800 |
| 19 | Վերմակ՝ բամբակե | Հատ/մարդ | 1 | 1800 |
| 20 | Սրբիչ (ձեռքի) | Հատ/մարդ | 1 | 1800 |
| 21 | Սրբիչ (լոգանքի) | Հատ/մարդ | 1 | 1800 |
| 22 | Տնակներ՝ փայտյա<br>կամ<br>Վրան (4- տեղանոց) | հատ/8 մարդու համար<br><br>հատ/4 մարդու համար | 1<br><br>1 | 225<br>450 |

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՄՈՒՆԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

| NN | Սպասարկման անվանումը | Չափի միավորը | քանակը | 1800 մարդու համար |
|---|---|---|---|---|
| 1. | ջրամատակարարում | լիտր(մարդ/օր) | 12.5 | 22500,0 լ |
| 2. | Վառելիքամատակարարում | կգ(1000 մարդ/օր) | 5.2 | 9360,0 |
| 3. | Բաղնիքներ | տեղ(1000 մարդ/օր) | 7.0 | 12600 |
| 4. | Լվացարաններ | 1000 մարդ/ծորակ | 15.0 | 27000 |
| 5. | Զուգարաններ | 1000 մարդ/տեղ | 35.0 | 63000 |
| 6. | Լվացքատներ | կգ(1000 մարդ/օր) | 120.0 | 216000,0 |
| 7. | Քիմմաքրմանկետեր | կգ(1000 մարդ/օր) | 3.2 | 5760,0 |
| 8. | Սննդիկետեր | տեղ(1000 մարդ) | 35.0 | 63000,0 |
| 9. | Առևտրիկետեր | Քառ/մետր(1000 մարդ) | 70.0 | 126000,0 |
| 10. | Բնակտարածություն | Քառ/մետրմարդ | 3,5 | 6300,0 |

Հավելված 6
Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 21-ի N 136 որոշման

ՀԱՇՎԱՐԿ
ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՍՆՆԴԱՄԹԵՐՔՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Տարահանված անչափահաս բնակչության սննդամթերքով ապահովման հաշվարկն է՝

| ՀՀ ը/կ | Սննդամթերքի անվանումը | 1- 3 տարեկան | | 4-6 տարեկան | | 7-17 տարեկան | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | երեխայի չափաքանակը (կգ/մարդ/օր) | 136 երեխայի համար 10 օրվա հաշվարկ | երեխայի չափաքանակը (կգ/մարդ/օր) | 81 երեխայի համար 10 օրվա հաշվարկ | երեխայի չափաքանակը (կգ/մարդ/օր) | 320 երեխայի համար 10 օրվա հաշվարկը | |
| 1 | Ցորեն, հաց | 0.04 | 54.4 | 0.08 | 64.8 | 0.25 | 800 | 919.2 |
| 2 | Ձավարներն մակարոնեղեն | 0.03 | 40.8 | 0.06 | 48.6 | 0.06 | 192 | 281.4 |
| 3 | Վարսակի փաթիլներ <<Հերկուլես>> | 0.03 | 40.8 | 0.06 | 48.6 | 0.02 | 64 | 153.4 |
| 4 | Կարտոֆիլ | 0.1 | 136 | 0.2 | 162 | 0.3 | 960 | 1258 |
| 5 | Բանջարեղեն | 0.1 | 136 | 0.2 | 162 | 0.4 | 1280 | 1578 |
| 6 | Մրգային պյուրե | 0.1 | 136 | 0.2 | 162 | 0 | 0 | 298 |
| 7 | Շաքար | 0.01 | 13.6 | 0.02 | 16.2 | 0.04 | 1280 | 1309.8 |
| 8 | Ձուկ, ձկնամթերք | 0.04 | 54.4 | 0.08 | 64.8 | 0.1 | 320 | 439.2 |
| 9 | Կարագ | 0.01 | 13.6 | 0.02 | 16.2 | 0.03 | 960 | 989.8 |
| 10 | Միս, մսամթերք | 0.08 | 108.8 | 0.16 | 129.6 | 0.48 | 1536 | 1774.4 |
| 11 | Կաթ, կաթնամթերք | 0.09 | 122.4 | 0.18 | 145.8 | 0.2 | 640 | 908.2 |
| 12 | Ձու | 0.5 | 680 | 1 | 810 | 1.5 | 4800 | 6290 |
| 13 | Կերակրի աղ (յոդացված) | 0.002 | 2.72 | 0.002 | 1.62 | 0.002 | 6.4 | 10.74 |
| 14 | Թեյ | 0 | 0 | 0.001 | .81 | 0.001 | 3.2 | 4.01 |
| 15 | Պանիր | 0 | 0 | 0.02 | 16.2 | 0.02 | 64 | 80.2 |
| 16 | Ջուր (Նոյ) լիտ (մարդ) օր | 1.5 | 2040 | 2.5 | 2025 | 5 | 16000 | 20065 |

3. Տարահանված չափահաս բնակչությանը և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմին սննդամթերքով ապահովման հաշվարկն է՝

| ՀՀ ը/կ | Ապրանքի անվանումը | Չափահաս բնակչության | | Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | չափաբաժին (կգ/մարդ/օր) | 1936 բնակչության համար 10 օրվա հաշվարկ (կգ) | չափաբաժին (կգ/մարդ/օր) | կազմավորումների 50 անձնակազմի համար 10 օրվա հաշվարկով(կգ) | |
| 1 | Թեփահանված աշորայի և ցորենի առաջին տեսակի ալյուրի խառնուրդից հաց | 0.25 | 4840 | 0.6 | 300 | 5140 |
| 2 | Ցորենի առաջին տեսակի ալյուրից սպիտակ հաց | 0.25 | 4840 | 0.43 | 215 | 5055 |
| 3 | Ձավարեղեն (բրինձ երկարավուն) | 0.06 | 1161.6 | 0.1 | 50 | 1211.6 |
| 4 | Մակարոնեղեն (տեղական) | 0.02 | 387.2 | 0.02 | 10 | 397.2 |
| 5 | Կաթ | 0.2 | 3872 | 0.5 | 250 | 4122 |
| 6 | Մսի պահածո | 0.06 | 1160.6 | 0.1 | 50 | 1210.6 |
| 7 | Ձկան պահածո | 0.025 | 484 | 0.06 | 30 | 514 |
| 8 | Կարագ | 0.03 | 580.8 | 0.05 | 25 | 605.5 |
| 9 | Շաքար | 0.04 | 774.4 | 0.07 | 35 | 809.4 |
| 10 | Կարտոֆիլ | 0.3 | 5808 | 0.5 | 250 | 6058 |
| 11 | Բանջարեղեն | 0.12 | 2323.2 | 0.18 | 90 | 2413.2 |
| 12 | Կերակրի աղ (յոդացված) | 0.015 | 290.4 | 0.02 | 10 | 300.4 |
| 13 | Թեյ | 0.001 | 19.36 | 0.002 | 1 | 20.36 |
| 14 | Պանիր | 0.02 | 378.2 | 0.04 | 20 | 398.2 |
| 15 | Ջուր (Նոյ) -ամառային ամիսներին | 2,5 | 48400 | 2,5 | 1250 | 59650 |
| | | 5 | 96800 | 5 | 2500 | 99300 |

ՄԻՆՉԵՎ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ՌԱՑԻՈՆԸ

| NN ըկ | ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | մինչև 3 ամսական (10 երեխա) | | 4-6 ամսական (10երեխա) | | 7-9 ամսական (10 երեխա) | | 10-12 ամսական (10 երեխա) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Քանակը (գրամ) | 10 օրվա համար կգ | Քանակը (գրամ) | 10 օրվա համար կգ | Քանակը (գրամ) | 10 օրվա համար կգ | Քանակը (գրամ) | 10 օրվա համար կգ |
| 1. | Հացամթերք՝ ա) ցորենի հաց (կամ պաքսիմատ) | - | | - | | 10 | 100 | 40 | 4000 |
| | բ) տարեկանի հաց | - | | - | | - | | 15 | 1500 |
| 2. | Ձավարեղեն, մակարոնեղեն՝ | - | - | 18 | 1800 | 18 | 1800 | 30 | 3000 |
| | ա) «հերկուլես» | - | - | 8 | 800 | 18 | 1800 | 30 | 3000 |
| | բ) բրնձի | - | - | - | - | - | - | 3 | 300 |
| | գ) սպիտակահատի | - | - | 8 | 800 | 4,5 | 450 | 3 | 300 |
| | դ) հնդկացորենի | - | - | - | - | - | - | 5 | 500 |
| | ե) մակարոնեղեն | - | - | - | - | 4,5 | 450 | 6 | 600 |
| 3. | Կարտոֆիլ | - | - | 70 | 7000 | 70 | 7000 | 100 | 10000 |
| 4. | Բանջարեղեն, ընդամենը | - | - | 70 | 7000 | 70 | 7000 | 100 | 10000 |
| | այդ թվում՝ ա) գազար | - | - | 28 | 2800 | 28 | 2800 | 30 | 3000 |
| | բ) բազուկ | - | - | 5 | 500 | 5 | 500 | 10 | 1000 |
| | գ) սպիտակագլուխ կաղամբ | - | - | 28 | 2800 | 28 | 2800 | 36 | 3600 |
| | դ) քաղցր տաքդեղ | - | - | - | - | - | - | 1 | 100 |
| | ե) սոխ | | | - | | - | | 5 | 500 |
| | զ) կանաչեղեն և այլ բանջարեղեն | - | - | 9 | 900 | 9 | 900 | 13 | 1300 |
| | է) կանաչ ոլոռ | - | - | - | - | - | - | 5 | 500 |
| 5. | Մրգեր՝ ա) մրգային պյուրե | 10 | 1000 | 50 | 5000 | 100 | 10000 | 100 | 10000 |
| | բ) մրգային հյութ | 30 | 3000 | 40 | 4000 | 50 | 5000 | 50 | 5000 |
| | գ) չրեր | - | - | - | - | - | - | 10 | 1000 |
| 6. | Շաքար, հրուշակեղեն՝ թխվածքաբլիթ | - | - | - | - | -<br>10 | 1000 | 10-15<br>20 | 1000-1500-<br>2000 |
| 7. | Բուսական յուղ | - | - | 1-2 | 100-200 | 2-4 | 200-400 | 4-6 | 400-600 |
| 8. | Ձուկ և ձկնամթերքներ | - | - | - | - | 30 | 3000 | 40 | 4000 |
| 9. | Միս և մսամթերքներ՝ միս (արգանակի համար) | - | - | - | - | 60 | 6000 | 80 | 8000 |
| 10. | Կաթ և կաթնամթերքներ՝ | - | - | - | - | - | - | - | |
| | ա) կաթնային խառնուրդներ | 90 | 79200 | 70 | 7000 | 55 | 5500 | 55 | 5500 |
| | բ) չոր կաթ կամ մանկական կեր | - | - | 80 | 8000 | 180 | 18000 | 200 | 20000 |
| | գ) մածուն | - | - | 40 | 4000 | 100 | 10000 | 100 | 10000 |
| | դ) կաթնաշոռ | - | - | 2 | 700 | 50 | 5000 | 50 | 5000 |
| | ե) կարագ՝ սերուցքային | - | - | - | - | 5 | 500 | 10 | 1000 |
| 11. | Ձու (հատ) | - | - | 1/4 | 25 | 1/2 | 50 | 1 | 100 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solax.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 137

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 16 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 1-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 16 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Որոշման 2-րդ կետում <<Ռուսամ Մկրտչյան>> բառերը փոխարինել <<Տիգրան Գեղամյան>> բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019 թ. 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

գ.Սոլակ